ՔԱՂԱՔԱՑԻԱ-ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ 2020/12/01

«15» դեկտեմբերի 2020թ.

ք. Երևան

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերությունը, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս գլխավոր տնօրեն Մ .Միլիտոնյանը, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ քաղաքացի Վահրամ Խաչատուրի Մարգարյանը, այսուհետ՝«Կատարող», մյուս կողմից, հետագայում համատեղ հիշատակվելով «Կողմեր», կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Պատվիրատուն հանձնարարում է և վճարում, իսկ Կատարողը պարտավորվում է իրականացնել պայմանագրի 1.2 կետում նշված աշխատանքները, այսուհետ «Աշխատանք»:

1.2. Աշխատանքը բաղկացած է.

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց » ՓԲ ընկերության Երևանի հաղորդիչ կենտրոնի տարածքում տեղադրված թվով երկու օդորակիչների դիագնոստիկա և վերանորոգում.

-օդորակիչի կոմպրեսորի ելքային կոնդենսատորի փոխարինում նորով,

-օդորակիչի օդամղիչի վառված շարժիչի փոխարինում նորով:

1.3. Աշխատանքի կատարման ժամկետ է սահմանվում Է 2020 թ. դեկտեմբերի 15-ից 16-ը:

1.4. Աշխատանքը Կատարողի կողմից Պատվիրատուին է հանձնվում կատարողական ակտով:

2. Պայմանագրի գինը և վճարման կարգը

2.1. Աշխատանքի համար պայմանագրային գին է սահմանվում 69 000 /վաթսունինը հազար ՀՀ/ դրամ:

2.2. Վճարումը կատարվում է կանխիկ, Աշխատանքի ավարտից և կատարողական ակտի ստորագրումից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

3. Պայմանագրի գործողության ժամկետը

Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների կատարման ավարտը:

4. Եզրափակիչ դրույթներ

Սույն պայմանագրում կատարված ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է, եթե դրանք գրավոր են և ստորագրված Կողմերի կողմից:

Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու՝	*Կատարող՝*
ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95	*Անձնագիր* AG0635089
Ամերիաբանկ ՓԲԸ	*Տրված 16.12.2005թ .005-ի կողմից*
Հ/հ 1570027609970100	*Երևան Ա.Բակունց փ .15շ 2 բն.*
	ՀՈՀ 2204770407
ՀՎՀՀ 01501898	
Մ.Միլիտոնյան	*Վ.Մարգարյան*

3

«Հ Ա Ս Տ Ա Տ Ո Ւ Մ Ե Մ»
«ՀՀՌՑ» ՓԲ ընկերության
գլխավոր տնօրենի տեղակալ
Ս. Դավթյան

Ա Կ Տ
հանձնման-ընդունման

16 դեկտեմբեր 2020 թ.

ք. Երևան

Մենք՝ ներքոստորագրյալներս, «ՀՀՌՑ» ՓԲ ընկերության ԵրՀԿ-ի պետ Ս. Քոչարյանը, գլխամասային կայանի պետ Ա.Հարությունյանը, այսուհետ Պատվիրատու, մի կողմից, և քաղաքացի Վահրամ Մարգարյանը, այսուհետ Կատարող, մյուս կողմից, կազմեցինք սույն ակտը հետևյալի մասին.

Համաձայն 15.12.2020թ. կնքված աշխատանքների կատարման թիվ 2020/15/12 քաղաքացիաիրավական պայմանագրի, Կատարող Վ.Մարգարյանի կողմից վերանորոգվել են Երևանի հաղորդիչ կենտրոնի տարածքում տեղադրված թվով երկու օդորակիչները.

-օդորակիչի կոմպրեսորի ելքային կոնդենսատորը փոխարինվել է նորով,

-օդորակիչի օդամղիչի վառված շարժիչը փոխարինվել է նորով:

Աշխատանքները կատարվել են ժամանակին և որակով, և հանձնել են Պատվիրատուին, որի համար ստորագրում ենք:

Ընդունող՝

Ս. Քոչարյան

Հանձնող՝

Վ. Մարգարյան

Ա. Հարությունյան